## Ռուբեն Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., «Լուսակն», 2009, 248 էջ:*

Թեև Հայաստանում Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրությունը հարուստ ավանդույթներ ու բազում ձեռքբերումներ ունի, բայց համեմատական ցեղասպանագիտությունը մեզանում նոր է միայն ձևավորվում: Մինչդեռ, ակնհայտ է, որ Հայոց ցեղասպանության պատմությունը համաշխարհային պատմության լայն խորապատկերի վրա դիտարկելու հասունացած խնդրի լուծումը այլևս չի կարելի հետաձգել: Պատճառն այն է, որ համեմատական բնույթի հետազոտությունները հնարավորություն են տալիս ընդլայնել ինչպես մեր, այնպես էլ օտարների պատկերացումները և գտնել Հայոց ցեղասպանության տեղը 20-րդ դարում տեղի ունեցած նույնատիպ ողբերգությունների ընդհանուր շղթայում:

Գրախոսվող մենագրությունն այս առումով թերևս առաջին լուրջ փորձն է՝ Հայոց ցեղասպանության թեմայով Հայաստանում նկարագրական «պատմագիտության» ու հրապարակախոսական «քաղաքագիտության» կողմից վերջերս «առատության եղջյուրից» մեր գլխին թափվող, սակայն ուսումնասիրվող նոր սկզբնաղբյուրների, առավել ևս՝ հարցադրումների ու եզրակացությունների բովանդակության մեջ որևէ էական նորույթ չավելացնող աշխատություններից հետո: Ի տարբերություն տեխնիկական աշխատանքը գիտական հետազոտության հետ նույնացնող փաստագիր-պատմաբանների, Ռուբեն Սաֆրաստյանը ներկա մենագրությամբ բավականին հավակնոտ նպատակ է դրել իր առջև. Օսմանյան կայսրության ցեղասպանական ծրագրերի քննության միջոցով բացահայտել այն ընդհանուր օրինաչափություններն ու միաժամանակ՝ տարբերությունները, որոնք բնորոշ էին այդ պետության կողմից տարբեր ժողովուրդների հանդեպ ծրագրված ու իրականացված հանցագործություններին: Հեղինակի կողմից ընտրված ուսումնասիրության բավականին լայն ժամանակագրական շրջանակները (1876-1920 թթ.) հնարավորություն են տվել աշխատության վերջին ենթակետում քննել նաև Հայաստանի Հանրապետության ստրկացման քեմալականների ծրագիրը (1920 թ. նոյեմբեր):

Հաշվի առնելով մենագրության «Առաջաբանում» բարձրացված գիտական հիմնախնդիրների ծավալն ու բարդությունը, հեղինակը «Տեսական հիմնադրույթներ» գլխում անցում է կատարել համաշխարհային պատմագիտության մեջ ցեղասպանության հայեցակարգի ձևավորման գործընթացի քննությանը: Մի շարք հիմնարար հասկացությունների միջոցով նա փորձել է հաղթահարել այդ

* Ընդունվել է տպագրության 29. 06. 2010:

հայեցակարգում առկա էական բացթողումները, մասնավորապես՝ պետության դերի և դիտավորության (intent)-ի հանգամանքի ոչ բավարար հետազոտությունը և միաժամանակ՝ սահմանել իր սեփական մոտեցումները:

Ռ. Սաֆրաստյանը տեղին է արձանագրել է Օսմանյան պետությանն ի սկզբանե բնորոշ հիմնական աշխարհառազմավարական առանձնահատկությունը, այն է՝ Իկոնիայի սուլթանության կազմում Օսմանի ուչբեյության ունեցած սահմանային դիրքը և դրանով պայմանավորված՝ հարևան քրիստոնյա ժողովուրդների զինված թալանով զբաղվելու փաստը: Անշուշտ, սա հիմք դարձավ որոշակի տարածքների նվաճման և կոլեկտիվ թալանի վրա հիմնված՝ **ղազիական պետության** ձևավորման համար:

Սակայն, հայտնի է, որ միջնադարում ստեղծված նմանօրինակ պետությունները, օրինակ՝ իր ժամանակին օսմանյանից էլ ավելի հզոր Լենկ Թեմուրի տերությունը կամ մոնղոլ-թաթարական Ոսկե Հորդան բավականին արագ բռնեցին երկպառակությունների ու ինքնաոչնչացման ճանապարհը, իսկ ահա Օսմանյան կայսրությունը գոյատևեց մինչև 20-րդ դարը: Ուստի՝ իրավացիորեն արձանագրելով, որ Օսմանի հիմնած իշխանությունը «...միակ ղազիական բեյությունն էր, որը վերաճեց կայսրության՝ պահպանելով իր էությունը»[1], հեղինակը փաստորեն հուշում է, որ Օսմանյան կայսրության ռազմատենչ և ավազակային բնույթի կողքին առկա էր նաև նրա **երկրորդ էական առանձնահատկությունը**: Հայտնի է, որ նվաճելով ասիական ու եվրոպական մայրցամաքների հատման տիրույթում բնակվող միջնադարի չափանիշներով՝ թերևս ամենաքաղաքակիրթ երկրներին ու ժողովուրդներին, նրանց մի մասի միլիեթական-համայնքային գոյությունը պահպանելու միջոցով թուրքերը հաշվենկատորեն ապահովեցին իրենց պետության գոյության տնտեսա-մշակութային հիմքերը:

Այս երևույթը պատմության թուրք կեղծարարները մատուցում են իբրև նվաճված ժողովուրդների հանդեպ սուլթանների բարերարության արտահայտություն և հնարավորինս իդեալականացնում են այն:

Անհրաժեշտ է պարզել՝ իրականում ի՞նչ էր օսմանցիների կողմից ընձեռված նման հնարավորությունը. հանդուրժողականությու՞ն, թե՞ ժամանակավոր շահագործման եղանակ: Ա. Թոյնբին իր «Պատմության հետազոտությունը» հիմնարար աշխատության մեջ արձանագրել է, որ այստեղ խոսքը վերաբերում է նվաճված ժողովուրդների երկակի պահվածքի՝ **զիլոտիզմի** և **իրոդության** կրկնությանը: Առաջինը կրոնական համայնքի շրջանակներում իրականացվող՝ պասիվ դիմադրությունն է, ինչը հին աշխարհում բնորոշ էր օրինակ՝ հրեաներին, իսկ երկրորդը՝ կրոնափոխության միջոցով նվաճողների հետ հավասար իրավունքների տիրանալու ձգտումը, ինչը լայնորեն խրախուսվում էր նաև Օսմանյան կայսրության կողմից: Ա. Թոյնբիի կարծիքով՝ «Ուղղափառ քրիստոնեության հիմնական մարզում Pax Ottomanica ռեժիմի պարագայում բնակչության մեծամասնությունը պահպանում էր իր կրոնը: Հոգևոր անկախությունը ձեռք էր բերվել օտար քաղաքական իշխանությանը ենթարկվելու ճանապարհով: Սակայն, այդ զիլոտիզմը մասնակիորեն կոմպենսացվում էր նույնիսկ կրոնական պլանով՝ փոքրամասնության իրոդությամբ, որը քրիստոնեությունից անցնում էր

1 Ռուբեն Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., «Լուսակն», 2009, էջ 113:

իսլամին սոցիալական ու քաղաքական արտոնությունների համար, որոնք առատորեն հատկացվում էին նոր հավատի հետևորդներին օսմանյան իշխանությունների կողմից»[2]:

Ի դեպ, ականավոր պատմաբանի մատնանշած զիլոտիզմի երևույթը նրանից շատ ավելի վաղ արձանագրվել է անգամ ՀՅ Դաշնակցության 1892 թվականի ծրագրում՝ «Տաճիկները մեր երկրին տիրապետելուց յետոյ ամեն ջանք գործ են դրել մեր ժողովուրդը դարձնել մի **կաստա**, որի պարտականութիւնը լինի միմիայն աշխատել, արդիւնաբերել, ուրիշ ոչինչ»[3]: Ստացվում է, որ Օսմանյան կայսրությունում նման կաստայական կամ «միլիեթական» զիլոտիզմի առկայության փաստն ընդունվել է անգամ նրա հակառակորդների կողմից՝ Ա. Թոյնբիի բանաձևած հասկացություններից շատ առաջ:

Մեր կարծիքով օսմանյան կայսրության առաջին ցեղասպան պետությունը դառնալու պատճառը ոչ միայն նրա ավազակային կամ ռազիական բնույթի մեջ էր, այլև «միլիեթների» բաժանված քրիստոնյա հպատակների կոլեկտիվ շահագործման փաստերի վրա հիմնվող՝ Pax Ottomanica ռեժիմի: Պատճառն ակնհայտ է. կայսրությունը հիմնած եկվոր թուրքերը չունեին այն առանձին տարածքը՝ մետրոպոլիան, որի վրա կարող էին ստեղծել իրենց ազգային պետությունը: Այս իրողությունը **օբյեկտիվորեն** որոշակի պայմաններ ու նախադրյալներ էր ստեղծում ցեղասպանության քաղաքականության ծրագրավորման և գործադրման համար:

Ռ. Սաֆրաստյանն իր մենագրության երկրորդ և երրորդ գլուխներում բարեխիղճ կերպով ներկայացրել է Օսմանյան կայսրության բարեփոխման փորձերը՝ Մուստաֆա Բայրաքտարի, Գյուլհանեի հաթթ-ը շերիֆի հեղինակ Ռեշիդ փաշայի ձեռնարկած քայլերը, կայսրության բնակիչների «միախառնման ու միաձուլման» հայեցակարգն առաջադրած Ալի և Ֆուադ փաշաների ու մանավանդ՝ իր գործունեության սկզբնական շրջանում «բուլղարների բարեկամի» համարում ձեռք բերած, իսկ հետագայում նրանց ցեղասպանության ծրագիրը մշակած Միդհատ փաշայի քաղաքականությունը: Դրանք նույնպես վկայում էին, որ հենց քաղաքակրթությունների խաչմերուկում հայտնված այդ պետությունում էին կուտակվում ու հասունանում օտար էթնիկական խմբերի զանգվածային բնաջնջման նախադրյալները: Ծերտընդմեջ բնակվող էթնոկրոնական տարրերից բաղկացած Օսմանյան կայսրությունը սկզբունքորեն տարբերվում էր իրենց հստակ սահմաններով մետրոպոլիաներ ունեցող մյուս գաղութատիրական երկրներից: Կայսրությունից ազգային պետության վերածվելու հեռանկարի գիտակցումը եկվոր թուրքերի համար աստիճանաբար դառնում էր ցանկացած եղանակով միատարր երկրի ստեղծման մեկ միասնական ցեղասպանական ծրագիր՝ իր կոնկրետ՝ բուլղարական, հայկական, ասորական, հունական և այլ բաղադրիչներով: Դա էր պատճառը, որ 19-րդ դարում «նոր օսմանների» գրեթե բոլոր պարագլուխները անիծում էին իրենց նախնիներին՝ քրիստոնյա հպատակներին ժամանակին չձուլելու կամ ֆիզիկապես չոչնչացնելու, այսինքն՝ Pax Ottomanica ռեժիմը ձևավորելու համար, մոռանալով, որ այդ ռեժիմի շնորհիվ են օսմանցիները խուսափել մյուս քոչվորական հորդաների ճակատագրից: Ուստի 19-րդ դարի երկրորդ կեսին մշակված ցեղասպանական առաջին

2 http://gumilevica.kulichki.net/Toynbee/Toynbee604.htm.

3 Մեր ծրագիրը, «Դրօշակ», «Հայ Յեղափոխակ. Դաշնակցութեան» օրգան, Ժընեւ, 1894, օգոստոս, 10, էջ 2:

ծրագրերի հեղինակները հիմնականում ներկայացնում էին հենց «նոր օսմանների» գաղափարական ճամբարը:

Նվաճված ժողովուրդների շահագործման միլիեթական համակարգի քայքայման և թուրքական միատարր պետության ստեղծման քաղաքականության գիտական ընկալման համատեքստում հիմքերից զրկվում են համեմատական ցեղասպանագիտության կողմից հրեական Հոլոքոստն իբրև «ցեղասպանության հայեցակարգի արքետիպ» դիտարկելու փորձերը: Ռ. Սաֆրաստյանը նույնպես գրախոսվող մենագրության մեջ հերքել է այն տեսակետը, համաձայն որի՝ «... գոյություն ունի միայն մեկ, «իդեալական» ցեղասպանության դեպք՝ հրեաների Հոլոքոսթը, որը մնացած բոլոր ցեղասպանության դեպքերի համար ծառայում է որպես «արխետիպ»»[4]:

Սակայն մեջբերելով Հոլոքոսթը ցեղասպանության կոնցեպցիայի արքետիպ համարող հեղինակների տեսակետները, Ռ. Սաֆրաստյանը չի նկատել վերջիններիս առաջարկած հասկացությունների հակասական բնույթը: Բանն այն է, որ արքետիպն՝ ինքը, պարտադիր չէ, որ լինի «իդեալական»՝ բովանդակային առումով, բայց ահա ժամանակային առումով անպայման պետք է նախորդի մյուս օրինակներին: Արքետիպի կարևորությունը հենց այն է, որ նա կարող է ընկալվել, որովհետև հունարեն **արքե** (սկիզբ, սկզբունք) հիմքից ծագող այս եզրույթի իմաստը **սկիզբ** և **կերպար** հասկացությունների համաձուլվածքի մեջ է:

Ուրեմն՝ «արքետիպ» հասկացությունը որպես որևէ երևույթի նախնական կամ՝ նախասկզբնական բնույթի մատնանշում և Հոլոքոսթի «իդեալական» ցեղասպանություն լինելու մասին պնդումն իրականում տարբեր հարթությունների վրա գտնվող հասկացություններ են:

Առաջինի համատեքստում Սաֆրաստյանը մանրակրկիտ կերպով հետազոտել է 1870-ականներին «նոր օսմանների» գաղափարները կյանքի կոչող Միդհատ փաշայի՝ Բալկաններում իրականացրած «միաձուլման» քաղաքականության ձախողման և այն ի վերջո՝ 1876 թվականին բուլղար ժողովրդի դեմ ուղղված ցեղասպանության ծրագրի վերածվելու պատմությունը՝ վկայաբերելով այս առիթով բուլղարների հասցեին վերջինիս նետած «Դուք ձեր հույսը դնում եք Ռուսաստանի վրա, սակայն երբ նա վերջիվերջո կգա, նա կգտնի միայն ավերակներ»[5] սպառնալիքը: Համեմատական ցեղասպանագիտության տեսանկյունից կարևոր է այս նույն փաստերի կրկնությունը՝ 1890-ականների համիդյան ջարդերի շրջանում:

Ուստի, պատահական չէ, որ դրանց նախօրեին՝ 1890 թ. ամռանը, Մշո Սբ. Կարապետի «ուխտավորների» անվան տակ Կովկասից Տարոն անցած հայ գործիչներին տեղի թուրքերը դիմում էին մինչ ռուսների գալը հայերին բնաջնջելու իրենց մտադրության մասին ճիշտ՝ միդհատյան սպառնալիքներով. «Եթէ հայերը այդ խռովարարական ճանապարհով ընթանան, պետք է կոտորվեն բոլորը»[6]:

Այսպիսով՝ 1890-ականների համիդյան կոտորածները Օսմանյան կայսրության երկրորդ ցեղասպանական ծրագրի արդյունքն էին, որն առաջինից, այսինքն՝ բուլղարականից տարբերվում էր ոչ միայն մտադրության առկա-

4 Ռուբեն Սաֆրաստյան, Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., «Լուսակն»,- 2009, էջ 40:

5 Տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, նույն տեղում, էջ 164:

6 Ավելի մանրամասն տե՛ս Լևոն Սարգսյան, Ցուշեր 1889-1892 թվականներից..., ՅԱԱ, 4047, ց. 2, գ. 9, թ. 103:

յությամբ, այլև մասնակի գործադրման փաստով: Ավելին՝ ինչպես ցույց են տալիս պատմական փաստերը, սուլթան Համիդի պալատում այս երկրորդ ցեղասպանական ծրագրի մշակմանը մասնակցել են տարբեր վիլայեթներից հատուկ այդ նպատակով Կ. Պոլսում հավաքված թուրքական վերնախավի ներկայացուցիչները, որոնք իրենց առջև դրված՝ «իշխանություն տա՞նք, թե՞ կոտորենք» երկընտրանքից միանշանակորեն ընտրել են երկրորդ տարբերակը՝ «կոտորենք»: Ուստի՝ այս շրջանում արտասահմանում լույս տեսնող հայկական թերթերից մեկի թղթակիցը 1891-ի սկզբին հաղորդում էր Կարինից (Էրզրումից). «Եըլտըզ-Քէօշկին մէջ տեղի ունեցած մէկ քանի գաղտնի գումարումներէ յետոյ, հայ տարրին անխղճօրէն ոչնչացումը վճռուած է...»[7]:

Ավելին, սուլթան Համիդի պալատում 1890-ին կայացած ժողովները երիտթուրքական «կուսակցական ակտիվի» սալոնիկյան հավաքների «նախատիպերն» էին: Սա վկայում է, որ Վ. Տատրյանի կողմից ժամանակին առաջադրված՝ ցեղասպանության իրականացման մեջ անմիջական դերակատարը ոչ թե պետությունն է, այլ այն բռնատիրած քաղաքական կուսակցությունը հարցադրումն ավելի լայն մեկնաբանության կարիք ունի: Այն է՝ ցեղասպանությունն ի տարբերություն պարզ կոտորածի, պետությունը չի կարող իրականացնել առանց «հանրային աջակցության», այսինքն՝ առանց Միդհատի, կամ Բեհաեդդին Շաքիրի նման «մտածողների», նրանց գլխավորած գաղափարական հոսանքների (նոր օսմաններ, երիտթուրքեր) ու միաժամանակ՝ պետական ապարատից առանձնացված որոշակի մարդկանց համախմբումների, ժողովների կամ կառույցների:

Սակայն չի կարելի չհամաձայնել նաև Վ. Տատրյանի ու Ռ. Մելսոնի հարցադրումներին ի պատասխան՝ Ռ. Սաֆաստյանի կողմից ժամանակին բերված այն ճշգրիտ հակափաստարկի հետ, որ վերջերս Ռուանդայում և Բուրունդիում տեղի ունեցած ցեղասպանությունների մեջ դժվար է տեսնել «սոցիալական հեղափոխության» տարրեր կամ քաղաքական կուսակցության դերակատարություն[8]:

Այսպիսով՝ կախված երկրների զարգացման մակարդակներից ու առանձնահատկություններից, ցեղասպանությունների ծրագրավորմանն ու իրականացմանը մասնակցել են պետական իշխանությանն իրենց ծառայությունն առաջարկած կամ ծառայության մեջ գտնվող, այսպես ասած՝ «մտածողները» և իշխանության ձեռքին գործիք դարձած լայն հանրության զանազան շերտերը: Առավել կազմակերպված կառույցներ ունեցող վարչակարգերում այս տարրերը մոբիլիզացվել են հենց իշխող տոտալիտար կուսակցությունների՝ երիտթուրքերի կամ գերմանական ֆաշիստների կողմից: Բայց ահա վերը նշված բոլոր ցեղասպանական գործողությունների «միավորող առանձնահատկությունը» պետական իշխանության համակարգում գործող «ծրագրավորողների» կամ՝ «մտածողների» ջանքերի համադրումն է՝ հանրային լայն աջակցության գործոնի հետ:

Եվ այս փաստը կրկին ապացուցում է, որ ցեղասպանությունների երկար շարքում արքետիպը հենց Հայոց ցեղասպանությունն է, որում առաջին անգամ է հանդես եկել գաղափարախոսների (նոր օսմաններ, երիտթուրքեր), իշխող

---

7 «Հայաստան» երկշաբաթերթ, Լոնդոն, 1891, 1 եւ 15 փետրվար, N N 9 եւ 10, էջ 2:

8 Տե՛ս Рубен Сафрастян, К вопросу о методологии сравнительного исследования геноцида армян и геноцида евреев, «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XVIII: Եր., 1999, էջ 51:

վերնախավի, «հանրության» զանազան շերտերի, իսկ հետագայում նաև կուսակցական կառույցի՝ Իթթիհատի ու նրա գաղտնի կազմակերպության ղեկավարությունը: Հայոց ցեղասպանության իրականացմանը ցուցաբերված նման լայն «հանրային աջակցության» փաստից բխում է նաև այն եզրակացությունը, որ նրանում պատասխանատու են ոչ միայն հաջորդական վարչակարգերից բաղկացած թուրքական պետությունը, այլև թուրք ազգը՝ իր քաղաքական ղեկավարներով, գաղափարախոս-«մտավորականներով», և տեղական վերնախավերով հանդերձ:

Ցեղասպանությունների երկար շարքում Հայոց ցեղասպանությունն արքետիպ է նաև այն պատճառով, որ նրա հիմնական գծերը կրկնվեցին 20-րդ դարի այլ ցեղասպանությունների ընթացքում, մինչդեռ Հոլոքոստը զերծ մնաց օրինակ՝ երեխաներին ու կանանց բռնությամբ որոշակի էթնիկական խմբից զատելու և այլ խմբի հանձնելու հատկանիշից:

Գրախոսվող մենագրության ամենահետաքրքրական մասը Մեծ եղեռնի շրջանում միանգամից երեք փաստաթղթերի մեջ ձևակերպված՝ Օսմանյան կայսրության ցեղասպանական ծրագրի համեմատական վերլուծությունն է: Ռ. Սաֆրաստյան գիտնականի կատարած մեծ ծավալի ու խորության հետազոտության այս հատվածը վաղօրոք հրապարակվել է մեր հանդեսի էջերում[9]:

Սա իսկապես խորքային ուսումնասիրություն է, որի ծավալի սահմանափակությունը փոխհատուցվել է Ռ. Սաֆրաստյանին բնորոշ քննական-վերլուծական անժխտելի ունակություններով: Սա նաև լուրջ հարված է թուրքական ժխտողականությանը՝ հենց հակառակորդի «զենքերի» միջոցով: Հայոց ցեղասպանության սկզբնավորումից և Անտանտի երեք երկրների 1915-ի մայիսի 24-ի հայտնի նախազգուշացումից հետո սեփական հանցավոր քայլերը «post factum» սկզբունքով «օրինականացնելու» թուրքական փորձի մանրակրկիտ հետազոտությունը, ոչ միայն գիտական, այլև քաղաքական ու աշխարհայացքային մեծ արժեք ունի: Սրանով հեղինակը սկիզբ է դնում Թուրքիայի ղեկավարության քաղաքական պահվածքի մեջ շարունակաբար արձանագրվող՝ **«թալեաթյան սինդրոմի»** կամ ավելի լայն բնորոշմամբ՝ **«չպատժված հանցագործի համախտանիշի»** գիտական քննությանը: Այս երևույթը «կարմիր թելի» նման անցնում է ոչ միայն Թալեաթ փաշայի «հետցեղասպանական պահվածքի», այլև Հայոց ցեղասպանությունից հետո անցած 95 տարիների Թուրքիայի պատմության միջով: Ոմանց կարող է թվալ, թե գիտական փաստարկների ճնշման տակ նման անոմալիան վաղ թե ուշ իր տեղը զիջելու է Հայոց ցեղասպանության՝ իբրև անհերքելի փաստի, ընդունմանը և Թուրքիայի 95-ամյա հիվանդության հաղթահարմանը:

Դա խիստ միամիտ կարծիք է, քանի որ անտեսում է կեղծիքի ու ստի այն «շենքի» ողջ ահռելիությունը, որը կառուցել է Թուրքիան անցած 95 տարիներին: Նման «շենքն» իրականում «վերանորոգման» ենթակա չէ, բայց կարող է ժամանակավորապես «ամրացվել» նորանոր «կցակառույցների» միջոցով, ինչի արդյունքում նրա փլուզումը սարսափելի «երկրաշարժ» է առաջացնելու ողջ տարածաշրջանում: Եվ ներկա մենագրությամբ Ռ. Սաֆրաստյանը իր լուման է ներդրել այդ գործում:

9 Տե՛ս Ռուբեն Սաֆրաստյան, Հայոց ցեղասպանության պետական ծրագիրը: Թուրքական երեք փաստաթղթերի համեմատական վերլուծություն, «Վէմ» համահայկական հանդես, 2009, նո. 1 (26), էջ 48-62:

Արդիական-քաղաքական մեծ նշանակություն ունի նաև Մուստաֆա Քեմալի գլխավորած Թուրքիայի Ազգային մեծ ժողովի կառավարության արտգործնախարարի պաշտոնակատար Ահմեդ Մուխտարի կողմից 1920թ. նոյեմբերի 8-ին Քյազիմ Կարաբեքիր փաշային ուղղված Հայաստանը «մեջտեղից վերացնելու» մասին ծածկագիր հրահանգի հանգամանալից ուսումնասիրությունը Ռ. Սաֆրաստյանի մենագրության վերջին՝ վեցերորդ գլխում: Սա ժամանակակից Թուրքիայի «հիմնադիր հայրերի» կազմած ցեղասպանական նոր ծրագրի հետազոտություն է:

Ռ. Սաֆրաստյանի մենագրության վեցերորդ գլուխն ուշադիր ընթերցելու պարագայում կարող ենք նաև նկատել, որ Հայաստանի դեմ գործողությունների այն նենգ մեթոդները, որոնք իբրև հանձնարարական՝ Անկարայից ստացել էր Քյազիմ Կարաբեքիրը 1920-ի նոյեմբերին, զարմանալիորեն նմանվում են 2008 թվականից հետո Թուրքիայի կողմից ձեռնարկվող «հաշտեցման» քայլերին: Դրանց մեջ փաստորեն՝ միակ էական տարբերությունը ուղղակի ռազմական ագրեսիայի փաստի բացակայությունն է, ինչը ներկայումս լրացվում է Ղարաբաղի հարցի կարգավորման գործընթացի մեջ խցկվելու համառ փորձերով, որոնք կրկին հիմնավորվում են «կովկասյան պատը քանդելու» հին հարցադրումով:

Այսպիսով՝ հեղինակը ցույց է տալիս, որ Մուստաֆա Քեմալի կողմից հիմնված արդի Թուրքիան եղել է ոչ միայն երիտթուրքերի ցեղասպանական ծրագրերի ժառանգորդը, այլև իր իսկ կազմած ցեղասպանական ծրագրի անմիջական իրականացնողը: Հաշվի առնելով նման ավանդույթների կենսունակությունը, դժվար չէ եզրակացնել, որ Հայոց ցեղասպանությունը հերքելու գերխնդրով առաջնորդվող արդի Թուրքիան ևս նոր ցեղասպանության իրականացմանը պատրաստ երկիր է, որի հետ քաղաքակիրթ հարաբերությունների տարբերակ առայժմ գոյություն չունի: Գրախոսվող մենագրության ողջ տրամաբանությունից բխում է նաև այն եզրակացությունը, որ չպատժված հանցագործի համախտանիշով տառապող Թուրքիան ինչպես անցյալում, այնպես էլ այսօր Հայաստանի հետ իր հարաբերություններում որոնել ու որոնում է Ադրբեջանի հետ իր միացման ուղիները, միջոցներն ու եղանակները:

Մենագրության վերջաբանում Ռ. Սաֆրաստյանը իրականացրել է Օսմանյան կայսրության ցեղասպանական ծրագրերի ամփոփիչ վերլուծությունը՝ հիմնվելով իր կողմից առաջարկվող հետազոտության **համեմատական-կառուցվածքային** մեթոդի վրա: Այսինքն՝ փորձել է ցեղասպանական գործողությունների համեմատական ուսումնասիրությունը զուգորդել ցեղասպանության ծրագրերի տեքստային հետազոտության հետ: Այդ մեթոդի կիրառումով հեղինակը ոչ թե պարզապես՝ հայտարարում, այլ գիտականորեն ապացուցում է, որ Օսմանյան կայսրությունը իր գոյության վերջին 50 տարիներին եղել է ցեղասպան ու ոճրագործ պետություն: Իսկ ահա Թուրքիայի Հանրապետության ձևավորումից հետո նման քաղաքականության էությունը չի փոխվել, այսինքն՝ «ցեղասպան» ու «ոճրագործ» բնորոշումները վերաբերում են նաև արդի Թուրքիային:

**Ամփոփելով** գրախոսությունը, շնորհավորում ենք քննական-վերլուծական անժխտելի ունակություններով օժտված գիտնական Ռուբեն Սաֆրաստյանին՝ նման լուրջ, ծանրակշիռ աշխատության հրապարակման առիթով: Նրա մենագրության հիմնարար հարցադրումներն այնքան շատ են ու բազմազան, որ

ընթերցանությունն անմիջապես միտք է շարժում՝ դրանով իսկ մեծացնելով գրախոսության ծավալը:

Համոզված ենք, որ այս աշխատությունը վաղ թե ուշ թարգմանվելու է անգլերեն: Ուստի նախքան այդ անհրաժեշտ ենք համարում մատնանշել նրա հիմնական թերությունը՝ Օսմանյան կայսրության ցեղասպանական ծրագրերի համեմատական վերլուծության մեջ կիրառվող «1876-1915» բանաձևը, որն անտեսում է «միջանկյալ օղակի»՝ 1894-1896 թթ. համիդյան կոտորածների դերը «բուլղարական փորձը» Հայաստանի ու հայության հանդեպ կիրառելու գործում: Ի պատիվ հեղինակի պետք է նշենք, որ նա նույնպես այս դիտողության հետ կապված որևէ առարկություն չունի և շարունակում է Թուրքիայի 1890-ականների ցեղասպանական ծրագրերն ամփոփող կոնկրետ փաստաթղթերի որոնումը...

Ռուբեն Սաֆրաստյանի «Օսմանյան կայսրություն. ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.)» մենագրությունը գալիս է վկայելու, որ չնայած բոլոր դժվարություններին, Հայաստանում պատմագիտական միտքը սկսել է հաղթահարել հետխորհրդային իներցիան և պարզ փաստագրությամբ տարվելու մոլորությունը՝ աստիճանաբար կանգնելով համաշխարհային գիտության լավագույն ձեռքբերումների մակարդակին:

Գ. Խ.